

ՈՐՈՇՈՒՄ

«15» հունիսի 2014թ.

N 438 Ա

ք. Ստեփանակերտ

2014 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ  
ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ  
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2014 թվականին կարկտահարությունից տուժած հողօտագործողներին պետական աջակցություն տրամադրելու նպատակով և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում կարկտահարությունից լրիվ ոչնչացած զարնանացան մշակաբույսերի ցանքատերերին (հողօգտագործողներին) յուրաքանչյուր հեկտարի դիմաց միանվագ տրամադրել 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամի չափով պետական աջակցություն՝ կարկտահարությունից լրիվ ոչնչացած զարնանացան մշակաբույսերի ցանքատարածքներում (այսուհետ՝ տուժած տարածք) սև ցել կատարելու պայմանով:
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերին՝ կազմակերպել տուժած տարածքներում ագրոկանոններին համապատասխան սև ցելի մշակության աշխատանքների կատարումը:
3. Սույն որոշման 1-ին կետով սահմանված պետական աջակցության հիմք են հանդիսանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքների ղեկավարների ներկայացրած և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարների կողմից հաստատված տուժած հողօգտագործողների վերաբերյալ տեղեկությունները:
4. Սույն որոշման 3-րդ կետում նշված տեղեկությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարները ներկայացնում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն:
5. Առաջարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից տրամադրված տեղեկությունների հիման վրա՝
  - 1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի վարչական սահմաններում կարկտահարությունից հիսուն և ավելի տոկոսով ոչնչացած

աշնանացան և գարնանացան մշակաբույսերի ցանքատերերին (հողօգտագործողներին) յուրաքանչյուր հեկտարի դիմաց, որպես պետական աջակցություն, անհատույց տրամադրել 150 (հարյուր հիսուն) կիլոգրամի չափով գարի՝ ըստ համայնքների՝ համաձայն N1 հավելվածի.

- 2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղրուֆի շրջանի կարկտահարությունից տուժած համայնքների բնակիչներին, որպես պետական աջակցություն, անհատույց տրամադրել գարի՝ մեկ շնչին 100 (հարյուր) կիլոգրամի չափով՝ ըստ համայնքների՝ համաձայն N2 հավելվածի.
- 3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղրուֆի շրջանի կարկտահարությունից հիսուն և ավելի տոկոսով ոչնչացած աշնանացան և գարնանացան մշակաբույսերի ցանքատերերին (հողօգտագործողներին) յուրաքանչյուր հեկտարի դիմաց, որպես պետական աջակցություն, անհատույց տրամադրել 150 (հարյուր հիսուն) կիլոգրամի չափով գարի՝ ըստ համայնքների՝ համաձայն N3 հավելվածի.
- 4) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում, սև ցել կատարելու ցանկություն չհայտնած, կարկտահարությունից լրիվ ոչնչացած գարնանացան մշակաբույսերի ցանքատերերին (հողօգտագործողներին), որպես պետական աջակցություն, անհատույց տրամադրել եգիպտացորենի սերմացու՝ կրկնացանքս կատարելու նպատակով:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՑԱՆԿ**  
**Ասկերանի շրջանում կարկտահարությունից 50-100%  
 տուժած համայնքների**

Հ/հ	Համայնքը	50-100 % տուժած տարածքը (հա)	Գարու քանակը (կիլոգրամ)
1	Ակնաղբյուր	164.3	24645
2	Աստղաշեն	37.3	5595
3	Ավետարանց	40.0	6000
4	Խաչմաչ	28.5	4275
5	Խնձրիստան	183.33	27499.5
6	Ծաղկաշատ	7.0	1050
7	Կ.Գյուղ	65.0	9750
8	Հիլիս	89.64	13446
9	Մաղաթաշեն	44.0	6600
10	Մոշխամհատ	27.0	4050
11	Նորագյուղ	169.45	25417.5
12	Ն.Սզնեք	45.0	6750
13	Սարուշեն	208.18	31227
14	Պատարա	2.3	345
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>1111.0</b>	<b>166650</b>

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
 ՂԵԿԱՎԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՑԱՆԿ**  
**Հաղրութի շրջանի կարկտահարությունից**  
**տուժած համայնքների**

Հ/հ	Համայնքը	Աջակցություն ստացող բնակիչների քանակը (շունչ)	Տրամադրվող գարու քանակը (կիլոգրամ)
1	Ակնաղբյուր	294	29370
2	Հարթաշեն	94	9450
3	Զրակուս	246	24600
4	Ուխտաձոր	340	33975
5	Քյուրաթաղ	275	27550
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>1249</b>	<b>124945</b>

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՑԱՆԿ

### Հաղորդի շրջանում կարկտահարությունից 50-100% տուժած համայնքների

Հ/հ	Համայնքը	50-100 % տուժած տարածքը (հա)	Գարու քանակը (կիլոգրամ)
1	Ազոխ	8.6	1290
2	Տող	63.0	9450
3	Տումի	129.42	19413
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>201.02</b>	<b>30153</b>

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ